իրենց դաւանութեան համեմատ՝ և թող այդ վարդապետն և հայոց քահանաները միմիայն Արարատեան հայրապետական վանքում նստող Հայոց Հայրապետի իշխանութեան ներքոյ գտնուին...»։

«Պոլուդենկի» կոչուած սահմանավայրի մօտ Նախիջևան քաղաքը հիմնելուց և դրան 12 հազար դեսեատին արօտատեղի յատկացնելուց յետոյ՝ հրամայում ենք սահմանել մի մաղիստրատ (խորհրդարան) և դրա մէջ ձեր օրէնքների ու սովորութիւնների համեմատ դատաստան կարել և գործադրել ձեր միջից իսկ վիճակով ընտրուած աւագների ձեռքով, որոնք և կը վայելեն Ազովեան նահանգի չտատին համապատասխան աստիճաններ ու ռոճիկներ և փոխարքայի իրաւասութեան ներքոյ կըլինին։ Իսկ քաղաքի և գիւղերի մէջ՝ ամեն կարևոր դէպքերում պաշտպանութիւն հասցնելու համար՝ կը կարգուին առանձին ռուս մեծաւորներ, որոնք պարտաւոր կը լինին՝ առանց միջամտելու այդ բնակիչների դատավարութեան՝ միմիայն պաշտպանել նրանց և պատսպարել»...

Բարձրագոյն հրովարտակի վերոյիշեալ 4-րդ յօդուածը, որ բովանդակում էր Կայսրուհու հոգածու խնամքն իւր նոր հպատակների հոգևոր կարիքների նկատմամբ, չէր մուծուած նոյն թուականի մայիսի 21 յանուն յոյն գաղթականների արձակուած հրովարտակում։

1780 թ. հայերն սկսեցին վերադարձել իրենց չնորհուած հողի վրայ, իսկ հետևեալ թուականի ապրիլ ամսին Յովսէփ արքեպիսկոպոսը Նոր-Նախիջևան քաղաքի հիմքը դրաւ։ Հիմնարկութեան տեղում նա հաստատեց և օծեց չորս հիմնաքար չորս Աւետարանիչների անունով և թափօր կատարեց. ապա թէ զանազան ժամանակ թէ քաղաքում և թէ մերձակայ գիւղերում մի քանի եկեղեցի օծեց — իսկ քաղաքի շրջանից դուրս մի բարձրաւանդակի վրայ մի վանք շինուեցաւ և դրան կից՝ մի վարժարան և տպարան։

Միևնոյն թուականին Յովսէփ արքեպիսկոպոսը մի հոգևոր ատեան (կոնսիստորիա) կազմակերպեց Աժտարխանում և յետոյ նոյն թուականի սեպտեմբերի 9-ին օծեց Մոսկվայի հայոց եկեղեցին՝ յանուն Ս. Խաչի։ Իսկ Պետերբուրգի հայոց եկեղեցին նա օծած էր աւելի առաջ, և յատկապէս 18 փետրուարի 1780 ամի։ Այդ հանդէսը մի առանձին շքով կատարուեցաւ. ներկայ էին Պոտեմկին իշխանն և ուրիշ բազմաթիւ

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան